


«Հայկազյան հայագիտական հանդեսը»

Բեյրութի Հայկազյան համալսարանի եւ Հայաստանի ազգային գրադարանի միջեւ կնքվել է Փոխըմբռնման հուշագիր, որի արդյունքում գիտակրթական կարելորագույն նշանակություն ունեցող երկու կառույցների միջեւ համագործակցությունը կսերտանա: Մփյուռքահայ կրթական կառույցների շարքում մեծ նշանակություն ունեցող հայկական Մփյուռքի միակ բարձրագույն ուսումնական հաստատությունն էլ հայ տպագիր գրքի ամենամեծ պահոցը կկազմակերպեն համատեղ ցուցադրություններ եւ համաժողովներ, մասնագետների փոխայցեր, կիրականացվեն թվայնացման համատեղ ծրագրեր, գրքերի եւ պարբերականների թվային պատճենների փոխանակում եւ այլն:



Փոխըմբռնման հուշագրի ստորագրության արարողությանը հաջորդեց Բեյրութի Հայկազյան համալսարանի հայագիտական ամբիոնի հրատարակած «Հայկազեան հայագիտական հանդես»-ի 39-րդ հատորի շնորհանդեսը: Միջոցառման բացման խոսքով հանդես եկավ եւ սփյուռքի հայկական կենտրոնների հետ համագործակցության կարելորության մասին խոսեց Հայաստանի ազգային գրադարանի տնօրեն Հրաչյա Սարիբեկյանը, որից հետո Հայկազյան համալսարանի



Հայկական սփյուռքի ուսումնասիրությունների կենտրոնի տնօրեն, դոկտոր Անդրանիկ Տագետեանը ներկայացրեց «Հայկազեան Հայագիտական Հանդես»-ի հայեցակարգը: «Հայկազյան հայագիտական հանդեսը» հրատարակվում է 1970 թվականից: Այն Բեյրութի Հայկազյան համալսարանի հայագիտական ամբիոնի հրատարակություն է, որը տպագրում է հայոց լեզվին, պատմությանը, մշակույթին, գրականությանը,

պատմագիտությանը, ճարտարապետական հուշարձաններին վերաբերող հոդվածներ, անտիպ փաստագրական նյութեր ու գրախոսականներ հայերեն, նաև արաբերեն և արևմտաեվրոպական լեզուներով: Ծանոթացնում է նորահայտ հայկական ձեռագրերին, ՀՀ-ում և Մփյուռքում հրատարակվող հայագիտական գործերին, տեղեկություններ հաղորդում հայագիտությանը նվիրված միջազգային համաժողովների մասին: Հանդեսի 39-րդ համարի բովանդակությունն ու հոդվածագիրներին, որոնք մեծամասամբ դառնալու էին, ներկայացրեց բանասեր, թարգմանիչ Արծվի Բախչինյանը:

Հանդիպման ավարտին «Հայկազեան Հայագիտական Հանդես»-ի դերի եւ կարելորության մասին խոսեց Հայկազյան համալսարանի տնօրեն Վեր. Դոկտ. Փոլ Հայտօսթեանը: